ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*18 հունվարի 2018թվականի N 19*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 31 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2018 թվականի հունվարի 12-ի N 25 գրավոր առաջարկությունը և Հայկ Մինասյանի կողմից տրված 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 21 գրավոր համաձայնագիրը.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Կենտրոն թաղամաս 47/35 հասցեում գտնվող՝ 30.0քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:*
*2.Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 47/35 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 30.0քմ մակերեսով ավտոտնակը/անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08012018-07-0059 գաղտնաբառ՝ C8TMNYFMTXJB/ գինը սահմանել 63000 /վաթսուներեք հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 1-ին գոտում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 30.0քմ մակերեսով հողամասը 89000 /ութսունինը հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 43 շենքի 13 բնակարանի բնակիչ Հայկ Մինասյանին (այսուհետ՝ գնորդ):*
*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:*
*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*18 հունվարի 2018թվականի N 20*

*ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սամվել Թովմասյանի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Արշիլ Գորկու փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 16 տան բնակիչ Սամվել Թովմասյանի կողմից Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 8-րդ շենքի թիվ 20 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N13122017-07-0044, գաղտնաբառ՝LXMPCIWCSJBZ/ բնակարանի ինքնակամ բացած դուռը:*

*2.Սույն որոշման ընդունման օրվանից դռան օրինականացման համար սահմանված 1700 /մեկ հազար յոթ հարյուր/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*

*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*18 հունվարի 2018թվականի N 21*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռներեց Մարինե Կիրակոսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2018 թվականի հունիսի 30-ը /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 35, բնակարան 5, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 35, շինություն 1 /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 100 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հունվարի 2018թվականի N 22*

## *ԼԵՎՈՆ ՄԱՐՏԻՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ և 35-րդ հոդվածների 1-ին մասերի, հիմք ընդունելով Հրազդանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 10-ի թիվ 1 արձանագրությունը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 468 տան բնակիչ Խաչատուր Լյովայի Հարությունյանին նշանակել իր հորեղբոր որդու՝ Լևոն Մարտինի Հարությունյանի /ծնվ. 15.09.2002թ./ նկատմամբ հոգաբարձու:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 հունվարի 2018թվականի N 23*

### *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռներեց Վալենտինա Գրիգորյանին տալ ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը/ գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 111 շենքին հարող տարածք/ առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 հունվարի 2018թվականի N 24*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Միլվարդ Հովհաննիսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2018 թվականի հունիսի 30-ը /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Երևանյան շենք 8, 1-ին հարկ /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 50 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ... *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2018թվականի N 25*

*ԺԱՄԸ 24 $^{00}$-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N-115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.«Ֆլեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ ժամը 24 $^{00}$-ից հետո աշխատելու թույլտվություն՝ օրացույցային տարվա համար, /գրանցման հասցե՝ քաղաք Երևան, Հարավ-Արևմտյան թաղամաս 50, 8/3, բնակարան 32, գործունեության հասցեն՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա /բենզալցակայան՝ հիմնական շինություն//:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*19 հունվարի 2018թվականի N 26*

## ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.«Ֆլեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը /գրանցման հասցե՝ քաղաք Երևան, Հարավ-Արևմտյան թաղամաս 50, 8/3, բնակարան 32, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա, /բենզալցակայան՝ հիմնական շինություն/:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 հունվարի 2018 թվականի N 27*

## *ԺԱՄԸ 24 $^{00}$-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N-115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Արման Թարջիմանյանին տալ ժամը 24 $^{00}$-ից հետո աշխատելու թույլտվություն մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 56-ա, բնակարան 19, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան Գ-4 թաղամաս, /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, 50-100 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 հունվարի 2018թվականի N 28*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Արման Թարջիմանյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացման թույլտվություն մինչև 2018 թվականի մարտի 31-ը, /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 56-ա, բնակարան 19, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան Գ-4 թաղամաս, /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, 50-100 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 հունվարի 2018թվականի N 29*

## *ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Արման Թարջիմանյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն մինչև 2018 թվականի մարտի 31-ը, /գրանցման հասցե՝քաղաք Հրազդան,Միկրոշրջան թաղամաս, շենք 56-ա, բնակարան 19, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան Գ-4 թաղամաս, /հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, 50-100 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 հունվարի 2018թվականի N 30*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 30 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2018 թվականի հունվարի 16-ի N32 գրավոր առաջարկությունը և Կարինե Դեմիրչյանի լիազոր անձ Մխիթար Բեգյանի կողմից տրված 2018 թվականի հունվարի 17-ի թիվ 25 գրավոր համաձայնագիրը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս 77/20 հասցեում գտնվող՝ 28.73քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:*

*2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 77/20 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 28.73քմ մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12012018-07-0008, զաղտնաբառ՝ 3XQALHHD77I2/ գինը սահմանել 38000 /երեսունութ հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 28.73քմ մակերեսով հողամասը 36000 /երեսունվեց հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 77 շենքի 6 բնակարանի բնակչուհի Կարինե Դեմիրչյանին (այսուհետ ՝ գնորդ):*

*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*23 հունվարի 2018թվականի N 31*

*ԱՅԳԵՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գեղամ Վարդանյանի 2018 թվականի հունվարի 19-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան քաղաքի Պ. Դուրյանի փողոց 12 շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Գեղամ Վարդանյանին ժառանգության իրավունքով փոխանցված /Հայաստանի Հանրապետության Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2018 թվականի հունվարի 17-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված սեղանամատյանում՝ 68 /Հրազդան քաղաքի Աղբյուրակ թաղամասի այգեգործական զանգվածում գտնվող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս, Այգեգործական զանգված, 3-րդ փողոց 40:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ու Մ*

*23 հունվարի 2018թվականի N 32*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 124.6քմ մակերեսով 0505-0079 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Լ. Խեչոյանի փողոց 20/2:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*23 հունվարի 2018թվականի N 33*

*ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սուսաննա Սահակյանի 2018 թվականի հունվարի 22-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան քաղաքի Շին.Տրեստի հանրակացարանի 310ս. բնակչուհի Սուսաննա Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2545546, տրված՝ 2007 թվականի դեկտեմբերի 25-ին/ Հրազդան քաղաքի Մաքրավան նոր թաղամասում գտնվող կիսակառույց բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս, Պ.Ադամյանի փողոց 26:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*23 հունվարի 2018թվականի N 34*

*ՊԱՏՎԱԿԱՆ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Պատվական Մեսրոպյանի 2018 թվականի հունվարի 22-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

*1. Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 420 տան բնակիչ Պատվական Մեսրոպյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2222081, տրված՝ 2006 թվականի հունիսի 23-ին/ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող շինություններին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 426/1:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*23 հունվարի 2018թվականի N 35*

## *ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՈՐՈՇԱԿԻ ՎԱՅՐՈՒՄ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Ռուզաննա Ավետիսյանին տալ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվություն՝2018 թվականի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 69, բնակարան 2, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա, /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*  *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*24 հունվարի 2018թվականի N 36*

## ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՀԱՐԹԱԿԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սնակ Յախշիբեկյանի 2018 թվականի հունվարի 17-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 30 շենքի թիվ 60 բնակարանի բնակիչ Սնակ Յախշիբեկյանի կողմից Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 69 շենքի թիվ 2 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N12122017-07-0030, գաղտնաբառ՝ RIYC3NWRKUFS/ գրասենյակին կից ինքնակամ կառուցած հարթակը և գրասենյակի ինքնակամ բացած դուռը:*

*2.Սույն որոշման ընդունման օրվանից հարթակի օրինականացման համար սահմանված 2200 /երկու հազար երկու հարյուր/ դրամ և դռան օրինականացման համար սահմանված 2100 /երկու հազար մեկ հարյուր/ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*

*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*24 հունվարի 2018թվականի N 37*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 69 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1855-Ն որոշումների հաստատված կարգերի, հիմք ընդունելով «ԱՐՏԵԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված գլխավոր հատակագիծը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 69 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25 և 27 կետերով նախատեսված ինքնակամ իրականացված կառույցները ճանաչել օրինական:*
*2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 69 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:*
*3.Շենքին կից ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*4.Շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 567.74քմ, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 1-ին գոտում:*

5.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
6.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
7.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ